# ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՆՑԵՑ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ

Հունվարի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանին փոխանցեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Մար Իգնատիոս Զաքքա Ա Իվաս Պատրիարքի կողմից պրն Խաչատրյանին շնորհված Ասորի Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Իգնատիոս Թեոփորոս» շքանշանը:

Սա Զաքքա Պատրիարքի գնահատությունն է ՀՀ ԱԺ նախագահին՝ Հայ Եկեղեցու հանդեպ տածած սիրո և նախանձախնդիր վերաբերմունքի համար:

«Մեզ համար մեծ ուրախություն է կատարել ցանկությունը մեր հավատակից Եկեղեցու գահակալի, որն անցած տարի հյուրընկալվեց Մայր Աթոռում և այցի ընթացքում հանդիպում ունեցավ նաև ձեզ հետ»,- շնորհավորելով պրն Խաչատրյանին և մաղթելով նրան հաջողություններ իր գործունեության մեջ, ասաց Վեհափառ Հայրապետը:

Շնորհակալության և երախտագիտության խոսքերով ընդունելով Պատրիարքի բարձրագույն պարգևը՝ պրն Խաչատրյանը կարևոր նկատեց հասարակական կյանքում քրիստոնեական բարոյական արժեքների հաստատումը: ԱԺ նախագահը հավաստիացրեց, որ այսուհետ ևս կշարունակի իր գործունեությունը ի բարօրություն հայ ժողովրդի և Եկեղեցու:

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***